

կոպոս՝ Հայ, եւ առաջի սոցա ընթերցաւ դատաւորն զհրովարտակն : Եւ 'ի ամին պահաւ բարձրացուցին զձայնս իւրեանց Եսայն եւ Պատրի 'ի վերայ փոխանորդաց եւ ասեն՝ Քրիստոնեայքդ այդոքիկ, տիրեալ են միոյ մասին կալուածոց Մէնճէք զպրողին, եւ բաժանեալ զայն 'ի միջի՝ Թաղեն զմեռեալս իւրեանց, եւ միոյ մասին տիրեալ են Հայք՝ փոխելով զսահմանս նորին՝ հանդէպ վանաց Ս. Փրկչի, եւ տեկեալ են անդ զծիթենիս, որոյ վասն հատուցանէին զ10 սուլթանի ոսկիս, եւ այժմ դարձեալ պահանջեմք զայնս : Եհարց դատաւորն ցփոխանորդսն՝ Թէ զի՞նչ ունին պատասխանել առ այն : Եւ նոքա ասեն, չունին դոքա իրաւունս պահանջելոյ զոսկի եւ կամ զայլ իրս վասն տեղւոյն այնորիկ, զոր ժառանգեալ եմք 'ի վաղ ժամանակաց առանց կռուոյ եւ հակառակութեան, զօրութեամբ դատաստանական գրոց եւ կայսերական հրովարտակաց, Սէլիմայ եւ յորդւոյ նորին Սիւլէյմանայ Արքայից, եւ մատոյց զնոսա Խաչատուր Եպիսկոպոս 'ի Ժողովն, յորս գոյր յիշատակ դերեզմանատան, առեալ 'ի դաշնագրոց մեծին Օմարայ եւ Սալահատտինի, որ եւ դատաւորն ընթերցաւ զայնս առաջի ամբաստանողաց, եւ ծանոյց զիմաստս նոցա : Բայց նոքա ոչ կամէին հնազանդիլ բանից հրովարտակաց . կրկնեաց դատաւորն յականջս հակառակորդաց զպատուէր Թաղաւորացն . Թէ որպէս Թողեալ են նոքա զժառանգութիւնս քրիստոնէից 'ի ձեռս նոցա հետեւելով եւ հաստատուն պահելով զբանս դաշնագրոց, որք նոքա չունէին երբէք իրաւունս պահանջելոյ զիրս ինչ 'ի քրիստոնէից, զի Օմար եւ Սալահատտին երիցագոյնք էին ժամանակաւ քան զՄէնճէք, եւ զիս՞րդ կարէր կալուած համարիլ զայն տեղի, եւ հարկս դնել 'ի վերայ նորա, զի նոքա 'ի տիրել իւրեանց քաղաքին սրբոյ՝ Թողին զկալուածս իւրաքանչիւր քրիստոնէի 'ի ձեռս իւրեանց, որպէս յայտնի ցուցաւ 'ի հրովարտակս : Եւ յետ բազում բանից մերժեաց զնոսա դատաւորն յատենէ՝ իւրմէ՝ եւ խափանեաց զանիրաւ պահանջս եւ զհակառակութիւնս նոցին, եւ պատուիրեաց չպահանջել զիրս ինչ 'ի քրիստոնէից, եւ իւրաքանչիւր ազգաց մնալ 'ի սեփական ժառանգութիւնս իւրեանց . եւ հուսկ ուրեմն հաճեցան հակառակորդքն՝ 'ի միտ առեալ զբանս հրովար-